ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ
№ 592

ք. Եղեգնաձոր
07 նոյեմբերի 2011 թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ 2011թ. ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐՈԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ կետերի, ՀՀ Նախագահի 2011 թվականի հոկտեմբերի 8-ի № 256-Ն հրամանագրի, ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 13-ի <<2011թ. աշնանային զորակոչը կազմակերպելու մասին>> № 1448-Ն որոշման, ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով

որոշում եմ՝

1.Հանձնարարել Եղեգնաձորի և Վայքի տարածքային զինկոմներին /Ա.Սարգսյան, Կ.Հակոբջանյան/ 2011թ. հոկտեմբեր – դեկտեմբեր ամիսների ընթացքում օրենքով սահմանված կարգով ՀՀ Վայոց ձորի մարզում կազմակերպել 1984 – 1993 թթ. ծնված ՀՀ քաղաքացիների զորակոչը՝ պարտադիր զինվորական ծառայության:

2.Մարզում 2011թ. աշնանային զորակոչը կազմակերպելու համար ստեղծել տարածքային զորակոչային հանձնաժողովներ Եղեգնաձորի և Վայքի տարածաշրջաններում՝ համաձայն սույն որոշման № 1 և № 2 հավելվածների :

3.Զորակոչիկների առողջական վիճակը ստուգելու համար զորակոչային տեղամասերում ստեղծել տարածքային բժշկական հանձնաժողովներ՝ համաձայն № 3 և № 4 հավելվածների:

4.Առաջարկել՝
1) ոստիկանության մարզային վարչությանը /Է.Գ. Կալիյան/.

ՀՀ կառավարության որոշման պահանջների ոգով, իր իրավասության շրջանակներում աջակցել զորակոչի տարածքային հանձնաժողովների աշխատանքներին՝ զորակոչը նախատեսված ժամկետում սահմանված կարգով կազմակերպելու համար,

2) ՀՀ Վայոց ձորի մարզային դատախազությանը /Է.Հակոբյան/. Օրենքով սահմանված կարգով զորակոչից խուսափողների նկատմամբ հարուցել քրեական գործեր, հանձնարարել համապատասխան մարմիններին բացահայտելու նրանց գտնվելու վայրը և միջոցներ ձեռնարկել հանրապետություն վերադարձնելու և 2011թ. աշնանային զորակոչին մասնակցելու համար:

5.Հանձնարարել մարզի առողջապահական հիմնարկների ղեկավարներին /Ա. Կարապետյան, Ռ. Ասլանյան/ նպաստել բժշկական հանձնաժողովների աշխատանքներին , տրամադրել բժշկական սարքավորումներ, դեղամիջոցներ և անհրաժեշտ գույք:

6.Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությանը /Ա. Գրիգորյան/ հսկողություն սահմանել համայնքներում զորակոչի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վրա և առկա վիճակի վերաբերյալ իրազեկել մարզային հանձնաժողովին:

7.Առաջարկել մարզի բոլոր համայնքների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների /անկախ սեփականության և իրավաբանական ձևից/ ղեկավարներին՝ /հիմք <<Զինապարտության մասին>> ՀՀ օրենք, հոդված 4, կետ 1/, ապահովել իրենց ենթակայության տակ գտնվող կազմակերպություններում աշխատող զորակոչային տարիքի ՀՀ քաղաքացիների ներկայությունը զինվորական կոմիսարիատներ՝ համաձայն ներկայացված ցուցակների կամ ծանուցագրերի:

8.Սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել ՀՀ Վայոց ձորի մարզային զորոկոչային հանձնաժողովին:

Ս.ԲԱԳՐԱՏՅԱՆ